ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

9 ՀՈՒՆԻՍԻ 2014 ԹՎԱԿԱՆ N 17-Ա

ԼԻԶԻՆԳՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի գյուղատնտեսության զարգացման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկա: ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ-ն համայնքներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա՝ շահավետ պայմաններով: Համայնքի համար առաջնահերթություն է մի շարք գյուղատնտեսական սարքավորումների՝ կուլտիվատոր, սերմնացան, գութան, խոտհնձիչ, ձեռք բերումը: Համայնքի ղեկավարն առաջարկում է 20% կանխավճարով, 3 միլիոն 650 հազար դրամով, 3 տարի մարման ժամկետով գնել անհրաժեշտ տեխնիկան:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է

1.Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերումը համարել առաջնահերթություն և ներկայացնել լիզինգի հայտ, 20% կանխավճարով, 3 միլիոն 650 հազար դրամով, 3 տարի մարման ժամկետով, գյուղատնտեսական սարքավորումներ՝ կուլտիվատոր, սերմնացան, գութան, խոտհնձիչ ձեռք բերելու համար:

2.2014-2017 թ.թ. ընթացքում յուրաքանչյուր տարվա համար համայնքի բյուջեում նախատեսել առնվազն լիզինգի գծով, վարձավճարների չափով, ծախսային համապատասխան հոդված:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Տեղեկանք 2014-06-16

Բանկ: ՀՀ ֆինանսների նախարարություն :
"Client-Treasury" համակարգով

Հաճախորդ: Բերդի համայնքի ֆոնդային բյուջե
Հաշվի համարը: 900386101027
Սկզբն. մնացորդ 30/05/14 CR 9,971,126.00 AMD

Փաստաթղթի համար	Ամսաթիվ	Դեբետ

Շրջանառություններ DB (0) 0.00 CR (0) 0.00
Վերջնական մնացորդ 16/06/14 CR 9,971,126.00 AMD

Շրջանառություններ

	Ելք	Մուտք

Մնացորդ

	Մտնող	Ելնող
0	9,971,126.00	9,971,126.00

Գլխ. հաշվապահ Հ. Մանուկյան
Գլխ. հաշվեկշռի պահ. Ե. Հովհաննիսյան